Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 801-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.	«Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2022 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ

»: